ՄԱՅԻՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

1983 թ. փետրվարի 5-ին կյանքից հեռացավ անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչ Մայիս Թադևոսի Ավդալբեգյանը։

Մ. Ավդալբեգյանը ծնվել է 1918 թ. ապրիլի 5-ին, Երևանի Նահանգի Իգդիր քաղաքում, ակադեմիկոս պատմաբան, բանասեր, տնտեսագետ և Թարգմանիչ Թադևոս Ավդալբեգյանի ընտանիքում։ 1940 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը, Մ. Ավդալբեգյանը հայոց լեզու և գրականություն է դասավանդում Փարպի գյուղի միջնակարգ դպրոցում, իսկ 1942 թ. ընդունվում է համալսարանի ասպիրանտուրան և մեծանուն հայագետ Մ. Աբեղյանի ղեկավարությամբ մասնագիտանում հայ հին և միջնադարյան գրականության բնագավառում։ 1944—1947 թթ. նա աշխատում է գրականության ինստիտուտում։ 1946 թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Խաչատուր Կեչառեցի» թեմայով։ 1947—1953 թթ. նա դասախոսական աշխատանքի է անցնում Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում, ուր վարում է հայ հին գրականության պատմության դասընթացը։ 1953 թ. վերադառնալով Երևան, նա նորից հաստատվում է ԳԱ գրականության ինստիտուտում։ 1972 թ. Մ. Ավդալբեգյանը պաշտպանում է «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը» թեմայով դիսերտացիա և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան։ 1977 թ. մինչև իր կյանքի ավարտը նա հաջողությամբ վարում էր ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչի պաշտոնը, մեծապես նպաստելով հայագիտության այս ճյուղի զարգացմանը։

Մ. Ավդալբեգյանի գիտահետազոտական երկարամյա և արգասավոր գործունեությունը հիմնականում ընթացել է երկու ուղղություններով՝ հայ միջնադարյան գրական հուշարձանների քննական բնագրերի պատրաստում ու հրատարակում և դրանց գրականագիտական ուսումնասիրում ու գնահատում։ Մասնակցելով «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» արժեքավոր հրատարակության (1957) աշխատանքներին, նա պատրաստել է ժողովածուում ընդգրկված առակների ու պարականոն զրույցների բնագրերն ու ծանոթագրությունները։ Մ. Ավդալբեգյանը գրականագիտական ընդարձակ ուսումնասիրություններով ու ծանոթագրություններով հրապարակ է հանել նաև Խաչատուր Կեչառեցու (1958) և Գրիգորիս Աղթամարցու (1963) սաղմերի քննական բնագրերը, որոնք «Միջնադարյան հայ տաղերգուներ» հայտնի մատենաշարի 1-ին և 6-րդ գրքերը եղան։ «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը» (1971), «Ճայսմատուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը» (1982) մենագրություններում անդրադառնալով վարք-վկայաբանական, պատմագրական, հայմավուրքային երկերի և պարականոն զրույցների քննությանը, նա դրանք արժեքավորում էր զուտ գեղարվեստական արձակի դիտակետից, բացահայտելով առանձին տեսակների ժանրային, կերպավորման, կառուցվածքային և ոճական մի շարք օրինաչափություններ։

Մ. Ավդալբեգյանը փորձում էր հայ գրականությունը տեսնել իր ամբողջության մեջ։ Այս հայեցակետից հետազոտելով Մ. Նալբանդյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի ստեղծագործական վաստակը, նա իր հոդվածներով ու զեկուցումներով հայտնաբերում և հաստատում էր ազգային հին գրականության լավագույն ավանդների յուրովի շարունակությունը նոր և սովետահայ դասականների երկերում։

Գիտահետազոտական անխոնջ գործունեությանը Մ. Ավդալբեգյանը հաջողությամբ զուգակցում էր գիտամանկավարժական աշխատանքը։ Նա երկար տարիներ համատեղության կարգով դասավանդել է նաև Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում, աշխատել ՀՍՍՀ մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում՝ մասնակցելով դպրոցական դասագրքերի ու ծրագրերի ստեղծման գործին։

Մ. Ավդալբեգյանը ապրեց ազնիվ կյանքով, սովետահայ գիտությանն ու լուսավորությանը ծառայելու անմնացորդ նվիրումով։

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Բաեսսիրական գիտությունների թեկնածու